

ռոյց Քրիստոսանկար աստուածաբնակ տաճարի սուրբ Էջմիածնի, այսքան է. յիսուն հալարի դադ երկայքն է...» (Եր. 235):

Ուրեմն, Խոտանանցին ոչ թէ գմբէթի պատուանդանից սկսած վերաշինել է և հին ձևը փոխել,—այնպիսի երկիւղած հաւատացեալները եթէ նոյն իսկ ամբողջ գմբէթը վերաշինէին էլ, չէին համարձակուի «հրեւեակացոյց, լուսկառոյց Քրիստոսանկար» ձևը փոփոխել,—այլ նա գմբէթի տանիքի թափուած ու խախտուած արտաքին սուրբն է նորոգել:

Հետեւեալ՝ գմբէթը, մանաւանդ նորա ձեւը՝ պէտք է ընդունուի և ճանաչուի նախնականը,—ինչպէս ճանաչուել է ցարդ,—ուրեմն եւ այսուհետեւ պահուի անձեռնամխելի, իբրեւ սրբազան հնութիւն:

29 դեկտ. 1910 թ.

Բարդուղիմէոս եպիսկ. Գեօրգեան.



Հնագիտական պեղումներ ճին Հայաստանում:

(«Кавказъ» 1910 № 296).

«Պետերբուրգում կազմուած մի բազմամարդ ժողովում Ռուսաց կայսերական հնախօսական ընկերութեան դասական մասնի անդամ պրօֆ. Ն. Մառը, գրում է «Н. В.», տեղեկութիւններ տուեց անցեալ ամառը կատարած հնախօսական պեղումների և նրանց հետեւանքի, նաեւ հին Հայաստանի շրջանում, Գառնիում հետազոտութեան մասին: Լրացուցիչ զեկուցումներ արին պեղումներին մասնակցող—Ե. Ի. Սմիլնովը «Ուղեւորութիւն Գեղամայ լեռներում» (О поездке въ Гегамскія горы), և Կ. Կ. Բոմանովը, որ փորձել էր կազմել Գառնու և նրա գլխաւոր հնութեան յիշատակարանի—հին հայկական տաճարի—ուրումնակարը:

Պեղումների համար ընկերութիւնը 2000 ռ. էր յատկացրել: Տեղի լեռնային և կորդ լինելու պատճառով հետազոտութիւնները մեծ գոյաւորութեամբ էին կատարուում: Աշխատութեան հետեւանքն պսակուեց հին Հայաստանի գեղարուեստի պատմութեան վերաբերութեամբ հարուստ և բազմազան արձանաքրական և ճարտարապետական (մօտ 700 քանդակներ) նիւթով: Հետազոտութեան գլխաւոր յիշատակարանը Գառնիում է մնացորդը հռոմէական ժամանակից հին հեթանոսական տաճարի, որ բարբարոսաբար կործանուել է: Տաճարը կառուցուած է մինչև քրիստոնէական թուականի 4-րդ դարը

այսինքն Հայաստանում քրիստոնէութիւն տարածուելուց առաջ: Արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ Տաճարը շինուել է այն շրջանում, երբ այստեղ տիրապետող էր յունական գրչութիւնը:

Շինութիւնը կառուցուած է մետաղէ շաղկապի և կապարի զանգուածի օգնութեամբ: Հռովմէական ոճի ապացոյցներն են շինութեան ճակատակողմի քանդակները, որ մեզ յայտնի են բացառապէս հռովմէական ժամանակներից:

Բ. դարում հեթանոսական տաճարը քրիստոնէականի է փոխուել: Թ. դարում այդ տաճարի մօտ թաղուել է Հայոց շտոց կաթողիկոսը և Գառնին երկար ժամանակ դարձել է ուխտատեղի: ԺԳ. դարում հին տաճարի տեղը կառուցուել է նոր տաճար: ԺԾ. դարում, Թեմուրի ապստակութեան ժամանակ շինութիւնները կործանուել են: ԺՁ. դարում, եւրոպական ազդեցութեան շրջանում՝ Հայաստանում աւերմունքը կատարեալ է եղել: Զեկուցման ժամանակ ցոյց էին տրուում բազմաթիւ լուսանկարներ:

Ա. Յ. Ե.

Ե Ր Բ Է Ք Չ Ե Մ Ս Պ Ա Ս Ի.

(Ռ Ո Ւ Ս Ե Ի Կ Ն Ի Գ)

Երբէք չեմ սպասի՝

Որ ձմռան ցրտին ձիւնապատ դաշտում

Հոտաւէտ, կարմրերանգ վառ վարդեր բացուեն.

Որ ապառաժուտ ժայռերն զգածուեն

Եւ կարեկցութեան արտասուք թափեն.

Որ ինձ մօտենան ծովերն հեռաւոր՝

Առաջ մղելով փրփրայոյզ ալիք,

Քաղաղ, հանդարտիկ, ոտներիս մօտին՝

Ծփուն կոհակներով հոգիս գրաւեն.

Որ երկինքը ներքեւ, ինձ մօտ, ցած իջնի,

Եւ երկնակամարն ինձ իւր մէջ առնի.

Որ կարմիր արեւն ջերմ ճառագայթով

Իւր ճաճանչները դէպ ինձ դարձնի.

Որ իմ սրտազին, համարձակ ու ջերմ

Բաղդի տենչանքով համակուած կոչին՝

Մարդկանցից գոնէ մի բառ պատասխան

Կամ կարեկցութեան մի քաղցր խօսք լսեմ:

Հասո.